

ՀՀ բանկային համակարգի 2012 թ-ի երրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

Ինչպես 2012 թ-ի երրորդ եռամսյակի, այնպես էլ ընթացիկ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների զծով համեմատական բարձր աճ: Հաշվետու ինն ամիսների ընթացքում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 33.5 մլրդ դրամ, վնասը՝ 4.3 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 29.2 մլրդ դրամ, այդ թվում՝ երրորդ եռամսյակում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 12.9 մլրդ դրամ, վնասը՝ 1.5 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 11.4 մլրդ դրամ:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2012 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 3.9 %-ով կամ 86.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,295.4 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն աճել էին 7.1 %-ով կամ 126.0 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա 1-ին ինն ամիսների ընթացքում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 10.7 %-ով կամ 221.3 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել էին 20.5 %-ով կամ 321.8 մլրդ դրամով: Տեղին է արձանագրել, որ համակարգի ընդհանուր ակտիվների նվազում էր գրանցվել այս տարվա առաջին եռամսյակում. այն կազմել էր մոտ 0.9 % կամ 18.9 մլրդ դրամ:

Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 0.9 %-ով կամ 14.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 6.7 %-ով կամ 9.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,565.3 և 154.6 մլրդ դրամ, ընդ որում՝ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 9.5 %-ով կամ 134.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 2.2 %-ով կամ 3.3 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 5.3 %-ով կամ 62.2 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 5.6 %-ով կամ 6.5 մլրդ դրամով: 2012-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 68.2 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 65.1 %-ը կամ 1,019.2 մլրդ դրամ, և այս ցուցանիշն երրորդ եռամսյակի ընթացքում աճել է 0.3 %-ով կամ 3.2 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 7.3 %-ի կամ 55.1 մլրդ դրամի դիմաց: Միևնույն ժամանակ նշենք, որ այս տարվա առաջին ինն ամիսների ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 17.1 %-ով կամ 228.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 15.1 %-ով կամ 20.3 մլրդ դրամով, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 15.7 %-ով կամ 138.2 մլրդ դրամով: Շարադրվածին միայն հավելենք, որ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին մոտ 8.0 %-ով կամ 75.1 մլրդ դրամով:


2012 -ի սեպտեմբերի 30-ի դրությամբ վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2012 -ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 1.4 %-ով կամ 6.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 462.2 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա երկրորդ եռամսյակի

ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 9.1 % կամ 38.0 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ անցած տարվա երրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել էր 4.1 %-ով կամ 13.9 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 29.5 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 18.9 %-ը կամ 296.0 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 7.9 %-ը կամ 124.2 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 5.7 %-ով կամ 16.0 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 2.6 %-ով կամ մոտ 3.1 մլրդ դրամով, ընդ որում՝ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էին 4.3 % կամ 11.5 մլրդ դրամ և 7.0 % կամ 7.9 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2011 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի աճը կազմել էր 2.4 % կամ 5.4 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 5.0 % կամ 4.9 մլրդ դրամ: Հարկ է նաև նշել, որ ընթացիկ տարվա 1-ին ինն ամիսների ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել է 19.2 % կամ 74.4 մլրդ դրամ, այդ թվում՝ սպառողական վարկերինը՝ 18.5 %-ը կամ 46.3 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 11.2 %-ը կամ 12.5 մլրդ դրամ: Համակարգում սպառողական և հիփոթեքային վարկերի գծով արձանագրված աճերի դինամիկան հիմք է տալիս եզրակացնելու, որ առաջիկայում ևս կապահովվեն վերոնշյալ վարկատեսակների գծով համեմատաբար բարձր ցուցանիշներ:

Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան




Պարտավորություններ


2012-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,902.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 24.5 %-ով կամ 373.9 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 4.4 %-ով կամ 80.3 մլրդ դրամով, իսկ այս տարվա երկրորդ եռամսյակում՝ 8.8 %-ով կամ 147.4 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 5.5 %-ով կամ 35.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 9.1 %-ով կամ 43.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 685.9 և 518.6 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 7.2 % կամ 37.1 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 8.4 % կամ մոտ 20.3 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերը նշված բոլոր ցուցանիշների գծով աճ էր գրանցվել նաև այս տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 9.0 %-ով կամ 53.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 11.2 %-ով կամ 51.6 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 1.6 %-ով կամ 2.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 2.9 %-ով կամ 13.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել էին 5.8 %-ով կամ 13.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 0.1 %-ով կամ 0.1 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 5.9 %-ով կամ 27.5 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 7.3 %-ով կամ 26.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 1.3 %-ով կամ 1.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 15.5 %-ով կամ 60.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 5.3 %-ով կամ 10.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 25.2 %-ով կամ 50.2 մլրդ դրամով: Միաժամանակ փաստենք, որ ընթացիկ տարվա 1-ին ինն ամիսների ընթացքում պարտավորություններն աճել են 12.0 %-ով կամ 203.1 մլրդ դրամով՝ նախորդ տարվա 23.5 %-ի կամ 291.0 մլրդ դրամի դինաց, ընդ որում՝ ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և

Ժամկետային) աճել են 22.8 %-ով կան 127.3 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 26.6 %-ով կան 115.6 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 9.4 %-ով կան 11.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 4.7 %-ով կան 23.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել 25.5 %-ով կան 53.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 10.4 %-ով կան 29.9 մլրդ դրամով: Համադրելու համար նաև նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 22.1 %-ով կան 90.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 25.0 %-ով կան 76.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 13.6 %-ով կան 14.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 21.2 %-ով կան 78.5 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 10.5 %-ով կան 18.8 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 31.4 %-ով կան 59.6 մլրդ դրամով: Ասվածին միայն հավելենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 63.3 %-ը:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2012 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)



Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան




Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 1.5 %-ով կամ 6.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 393.3 մլրդ դրամ, ընդ որում՝ ընդհանուր կապիտալն այս տարվա երկրորդ եռամսյակում ավելացել էր 1.7 %-ով կամ 6.5 մլրդ դրամով, իսկ ընթացիկ տարվա 1-ին ինն ամիսների ընթացքում՝ 4.8 %-ով կամ 18.2 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա երրորդ եռամսյակում ավելացել էր 2.5 %-ով կամ 8.7 մլրդ դրամով, իսկ 1-ին ինն ամիսների ընթացքում՝ 9.3 %-ով կամ 30.9 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից կանոնադիր կապիտալը հաշվետու եռամսյակում աճել է 3.8 %-ով կամ 9.0 մլրդ դրամով, իսկ չբաշխված շահույթը (եկամուտների պահուստը)՝ 7.6 %-ով կամ 10.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 242.9 և 144.8 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 61.8 և 36.8 %-ը: Հարկ է նշել, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում աճ էր գրանցվել միայն չբաշխված շահույթի ցուցանիշի նկատմամբ, որը կազմել էր 18.5 % կամ 21.0 մլրդ դրամ:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



Եկամուտներ եվ ծախսեր

Ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 85.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 70.9 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա երրորդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 68.5 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 55.3 մլրդ դրամ: Տեղի է ունեցել, որ հաշվետու եռամսյակի ընդհանուր եկամուտները և ծախսերը նախորդ եռամսյակի ընդհանուր եկամուտների և ծախսերին զիջել են համապատասխանաբար 1.4 %-ով կամ 1.2 մլրդ դրամով և 4.5 %-ով կամ 3.4 մլրդ դրամով: Ասվածին նաև հավելենք, որ հաշվետու ինն ամիսների ընթացքում համակարգում ապահովվել է 247.4 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 210.0 մլրդ դրամի ծախս, որոնք 2011 թ-ի 1-ին ինն ամիսների համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 29.9 %-ով կամ 57.0 մլրդ դրամով և 39.5 %-ով կամ 59.5 մլրդ դրամով:

Շահույթ


ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 11.4 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2011 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին գերազանցել է 0.9 մլրդ դրամով: Տեղի է ունեցել, որ այս տարվա առաջին ինն ամիսների ընթացքում համակարգում ապահովվել է 29.2 մլրդ դրամի մաքուր շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի՝ 32.2 մլրդ դրամի դիմաց:

Ամփոփ ցուցանիշներ

2012-ի առաջին ինն ամիսների արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 7.78 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.34 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության նվազում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 1.61 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.45 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները

Մլրդ դրամ



2012 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն երրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Յ/Յ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/վնաս	Զբաղ- շահույթ III-եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ Բանկ	243934,1	1,7	1	169349,7	-1,6	196851,6	2,3	2	48981,4	9,0	47082,5	-0,5	1	30000,0	0,0	9441,2	1147,0
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	206692,0	4,6	4	142268,9	9,6	171294,9	4,2	4	44251,4	2,9	35397,1	6,2	3	18434,4	76,6	15792,0	2213,0
3	Արդշինհնվեստբանկ	195316,0	10,5	5	122577,3	5,4	160611,1	11,7	5	46871,8	2,2	34704,9	5,4	4	15513,6	0,0	15181,0	1897,3
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	186312,3	2,7	6	151223,3	-0,2	156926,1	3,4	6	51695,3	13,1	29386,2	-1,1	5	13906,2	0,0	11776,6	1266,6
5	Կոնվերս Բանկ	102425,3	7,4	9	63484,9	5,0	85257,7	9,0	9	25981,6	6,4	17167,5	0,0	10	4923,3	0,0	8464,2	110,8
6	Յոնհիբանկ	136188,4	2,8	7	96158,5	3,6	118402,3	3,2	7	63474,5	7,0	17786,1	0,4	8	11400,7	0,0	6843,6	356,2
7	Հայէկոնոմբանկ	58681,5	-1,8	14	32943,3	-6,1	49585,2	-2,4	14	12748,5	-1,8	9096,4	1,3	18	2333,3	0,0	1235,1	175,4
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	241489,0	8,8	2	166092,4	4,4	205625,5	11,0	1	42306,3	6,3	35863,5	-2,1	2	25477,3	0,0	10407,6	2186,6
9	Ինելկոբանկ	97045,7	3,9	11	74288,4	-0,9	79800,6	3,7	11	16960,3	3,0	17245,1	5,1	9	7894,4	0,0	5910,8	860,2
10	Հայբիզնեսբանկ	207401,8	13,1	3	121325,7	-0,3	186508,5	15,0	3	62441,4	9,0	20893,3	-1,4	6	17500,0	0,0	2789,6	-547,9
11	Անելիք Բանկ	72902,1	-5,2	13	41087,0	-8,8	59511,9	-5,1	13	22073,9	-1,7	13390,2	-5,7	13	14300,0	0,0	-827,3	-868,5
12	Առէկսիմբանկ	112307,5	-2,8	8	89214,8	-1,9	95771,6	-3,6	8	20818,1	13,4	16536,0	1,8	11	12347,3	0,0	3883,9	296,7
13	Արցախբանկ	82061,2	1,2	12	59166,2	4,8	69604,0	0,9	12	12910,9	12,4	12457,2	3,0	14	6561,2	0,0	3802,5	345,0
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	98879,7	-9,6	10	66426,6	-18,9	84068,0	-11,9	10	15695,9	5,5	14811,7	5,7	12	7148,0	0,0	7082,5	990,8
15	ԱրմսվիսԲանկ	45756,2	-5,9	18	25569,0	-5,0	33936,4	-9,1	17	4000,7	4,0	11819,8	4,9	15	7002,0	0,0	3022,5	367,9
16	Զարգ. Հայկական Բանկ	49388,3	10,5	16	35473,5	11,0	41187,4	12,8	15	24198,4	7,2	8200,9	0,3	19	4556,7	0,0	3255,2	23,0
17	Պրոմեթեյ Բանկ	46481,4	6,0	17	30030,9	3,4	26640,7	9,4	19	8322,5	24,4	19840,7	1,8	7	14400,0	0,0	5384,3	395,2
18	Բիբլոս Բանկ Հայաստան	49761,0	10,0	15	37519,5	5,5	40659,8	12,2	16	13858,9	14,7	9101,2	0,8	17	8382,2	0,0	727,4	62,1
19	ԲՏԱ Բանկ	10207,6	4,5	21	6332,4	23,7	4597,5	8,3	20	1714,7	-5,7	5610,2	1,6	21	6520,0	0,0	-913,7	101,0
20	Պրոկրեդիտ Բանկ	37064,9	6,3	19	31517,6	11,9	30895,2	4,3	18	10654,3	20,0	6169,8	18,1	20	7490,0	15,4	-1320,2	-56,5
21	Մելլաթ Բանկ	15056,9	-12,2	20	3244,9	-43,6	4366,3	-33,3	21	79,2	-2,8	10690,7	0,8	16	6850,0	0,0	3609,0	85,3
	Ընդամենը	2295352,9	3,9		1565294,8	0,9	1902102,3	4,4		550040,0	7,2	393251,0	1,5		242940,6	3,8	115547,8	11407,2